

ցաղ՝ ՄՏԱՅՆ ԼԵՒԿԱՅԻ ԿՇՈՒՐ. ոչ ընդ լաւագոյնան իւանդայր, և ոչ զնուաստն արհամարհէր, այլ ամենեցուն հասարակաց զխնամոցն իւրոց ի վերայ տարածել ըզգեստս »: (Խոր. ԻԳ.):

Տիգրան՝ քաջացն քաջ, ուրիշ շատ քաջիբու հետ ազատ Մասեաց սարի ծայրէն կը դիտեն Նոր Հայաստանի փառքը: Մեր ուխտն է վերջինս գերազանցէ քան զանաջինն:

Քաջաց արենէն թող յառնեն Նոր Տիգրաններ և վճռաշապուհներ, քաղաքական և մտաւորական Ոսկեդար պատրաստեն

Հայ մարտիրոս ժողովրդին: Դուք անբաղդ հայրենեաց, բաղդաւոր զաւակներ, համայնալինջ սրէն ազատածներ, չէք մեռնիր այն ժամանակ. երբ պատմութիւնն կարենայ գրել ձեզ համար ալ թէ՛ յաւուրսն յայնոսիկ երանելի և ցանկալիներ անպայման Հայաստան երկիր, աշխահ Հայոց:

Հանճարն է մեզ կենք զնա վառեցէք

Մեզ ու ազտիկ այդոր սիրով վառուեցէք.

Մերն է Ապագան,

Ազատն Հայաստան:

ՄՆՂՈՒ ՇԻՐԱԿԱՑ

Ժ Ա Գ Տ Ը Մ Ո Ռ Ի Կ Ա Ն

Հ Ա Տ Ժ Ո Ղ Ո Վ Ը Ր Գ Ն Պ Ա Տ Մ Ո Ռ Թ Ի Ի Ն Ը

ԿԵՕԹ-ՉԱՏ ԿԱՄ ՍԵՒԱՆ

ՍԵՒԱՆԻ՝ լիւծ, Հին Աշխարհի ամենէն ընդարձակ և ամենէն գեղեցիկներէն մին, որուն կապտագոյն անոյշ ջուրերը միշտ ջինջ են, կը տարածուի գրեթէ 70 քիլոմետր երկայնութեան մը վրայ, մինչ իր ամենէն աւելի մեծ լայնութիւնը 30.000 քայլ է: Կանաչ լեռներու բլուրակ մը զայն կը շրջապատէ, կը տիրէ 1000 մետրէ աւելի բարձրութենէ անոր շրջապատին, կը սնուցանէ անգարաւոր գետակներ, որ կ'ոռոգեն անոր եզերքներուն վրայ յիշուած բազմաթիւ գիւղերը. իսկ Սեւանի գետգերեայ բնակիչները կ'ապրին իրենց մշակութեամբ և բիշ մ'ալ իրենց ձկնորսութեամբ, քանի որ Կէօք-Չայը շատ խոր է և ձկնեղով լեցուն. իր գեղեցիկ կարմրախայտերն համարեաւ են:

Ամառ ժամանակ՝ Սեւանի գիւղերը հեշտալի զովութիւն մ'ունին, բնութիւնը հոն ծիծաղկոտ է և առատաձեռն, բայց՝ հա-

զիւ թէ ցուրտերը կը խտանան, և ծառերուն տերեւները հիւսիսային քամիէն կը թափթփին, այդ ծովերու մակարդակէն 2000 մետր բարձրութեան վրայ գետնը լուծած այգիները ձիւնի ստուար սաւանով մը կը ծածկուին, սառը անշարժութեան կը դատապարտէ այս քաղցրաշուր ծովուն ալիքները, և գեղջուկը իր գիւղէն դուրս ելլել չի յանդգնիր, հօտերը գետնափորի մէջ կը քաշուին, և ամէն մէկ տան շուրջ կը բարձրանան ձիւնին տակ՝ փայտի, չոր քակորի, յարդի դէզերը, որոնք կարեւոր են եղեմաբի եղանակն անցնելու համար: Մեռելութիւնն է որ կը տիրէ՝ տարուան չորս կամ հինգ ամիսներուն մէջ: Ամէն ինչ կ'անբերեալութեան՝ սպիտակ մեծ քսղին տակ, և գիւղին դիրքը կարելի չըլլար զանազանել եթէ ոչ այն թեթև ծուխերէն որ կարծես թէ երկրին սառած ընդերքէն զուրս կ'ելլեն:

Երբ Տիգրիսէն Երևան երթալու ուղեգնացութիւնը՝ համբով կ'ըլլուէր, երբ բաղդը կ'ուզէր որ համբորդը՝ Չալուխուէն և Ելենովքայէն գալով, հասնէր Ախտա գիւղակը՝ արշալոյսին ծագելէն քանի մը վայր:

1. Հին ժամանակ՝ Պեղամի ծով կոչուած:

կեան առաջ, Այրարատի հրաժառուկեան փառահեղ տեսարանը իր զարմացած աչքերուն առջև կը բացուէր, և իր հոգւոյն մէջ կը թողուր ամենէն աւելի հիանալի տեսարանի մ'անմոռանալի յիշատակը՝ որուն կրցած ըլլայ երբեք ներկայ գտնուիլ։ Բայց այս սքանչելի ճամբան այսօր թողւըջուած է, այն աստիճն ի վեր երբ անշուք երկաթուղի մը կը կապէ Վրաստանի մայրաքաղաքը Ատրպատականի գլխաւոր աւանին, Աղէքսանդրուպօլէն ու Երևանէն անցնելով։ Բառաջադիմութիւնը կտրեք անցեր է այս դիւթիչ լեռները, և ճանապարհորդը չի տեսներ այլ ևս Սեանը, ներկայ չի գտնուիր Այրարատ լեռան վրայի արևու ծագման, ինչպէս նաև չի դիտեր Դարիալի՝ ահազդեցիկ կիրճերը, Քազպէքի՝ կովկասի արքային սառույցները՝ այն օրէն որ «կրուզինսքէ-տարոկա» դադրած է հիւսիսային անմշակ դաշտերուն և Անդրկովկասի միջև իրը հազորդակցութիւններու ճամբայ ծառայելէ։

Կայսերական Պետութիւնը քանի մը ճամբաներ գծած է հայկական լեռներուն միջև։ Բայց գրեթէ այս բոլոր ճամբաները քաղաքական կամ ռազմագիտական նպատակով մը շինուած են, և երկրին ամբողջութիւնը անցեալ դարերու հազորդակցութեանց վերածուած է դարձեալ։ Որքան որ ցաւալի ըլլայ այն վիճակը՝ վաճառաշահիկ տեսակէտով, սակայն շատ օգտակար է նկատելով նախնեաց աւանդութեանց, սովորութեանց, զգացումներու և լեզուին պահպանումը, այն քնակչաց համար որ այս շրջանակներուն մէջ կ'ապրին, և այս կղզիացման շնորհիւ է որ հայ հասարակութեանց մէջ անաղարտ կրցած է պահուիլ ազգային ոգին։ Այս լեռնականները, իրենց խոր ձորերուն, իրենց անտառներուն մէջ կորսուած, ստէպ անանցանքի լեռնազագագաթներով շրջապատուած, կ'ապրին երջանիկ, բնութեան բարեբնե-

րով հարուստ, և շատ հազուադէպ պարագաներուն կը թողուն իրենց յարկը ուր ծնած են, բացի Էջմիածին ուխտի երթալէն։ Այս առանձնացեալ գոյութիւնը, այս աշխարհէն անջատ կեանքը, Արևելքի բոլոր գեղջուկներուն վիճակն է. և սակայն այս մարդոց ցով կը տեսնենք թէ ընտանեկան կեանքի զգացումը անհամեմատ կիրպով շատ աւելի զարգացած է, ինչ որ չէ մեր (Ֆրանսացի) գիւղերուն մէջ՝ ուր արտաքին ազդեցութիւնները զայն օրէ օր դեռ աւելի կը ծիրացնեն։

ԵՐԱՍԽԸ

Երասխը՝ որ փոքր կովկասի հարաւակողման ջուրերը կ'ընդունի և Այրարատի ստորոտը կը թրջէ, Հայաստանի հիւսիսային մեծ գետն է։ Կը բղխի այն լեռներուն մէջ որ՝ Էրզրումէն՝ առ առաւելն 15 քիլոմետր հեռուէն՝ կը տիրեն այս քաղաքին արևելեան կողմէն։ Իր ջուրերը կ'իջնէն Բազանփէօքըն-Տաղէն՝ և Քարկապազըն-Տաղէն՝, լեռնազագագաթներ որ մաս կը կազմեն Պարսից Մոցին և Կասպից ծովու զանովայրներուն միջև եղող ջուրերուն բաժանման գիծին, քանի որ Էրզրումի մօտերն է որ արևմտեան Եփրատը գետնէն կը բղխի։

Ընթացքին սկիզբները՝ Երասխին կը միանայ իրմէ աւելի կարևոր օժանդակ գետ մը՝ Բասէն-Սու ըսուածը, որ կ'իջնէ արգասարբեր բայց ցուրտ և մերկացած դաշտագետինէ մը, որ վերջերս նշանաւոր հանդիսացաւ՝ Օսմանլիներուն վրայ Զաւրի բանակներուն տարած յաղթութեամբ։ Երասխը՝ այս տխուր միայնութիւններէն դուրս գալով, ընդհանրապէս անտառախիտ լեռներու բաւիղի մը մէջէն ճամբայ բանալով, կը հոսի դէպի արևելեան կողմը բուռն ջրվէժի մը մէջ՝ որուն մըջտատիղմ ջուրերը խորին կիրճերէ կ'ան-

1. Աւանաց դուռ՝ ըստ հնոց։

2. Թուրքասուպօլիս ըստ Յունաց և Հռոմայեցւոց, և Կարին ըստ Հայոց։

3. Բարձր. 3150 մետր։

4. Բարձր. 2530 մետր։

ցնին, իբր հեղեղ վար կը թափին և այսպէսով 1500 մեղրէ աւելի վերէն կ'իջնեն՝ Երևանի դաշտագետինն հասնելէ առաջ, Հոն՝ գետը իր ձորին ընդարձակ լայնութեան մը մէջ՝ կ'ընդունի հիւսիսի լեռներէն եկող զանազան օժանդակներ, ի միջի այլոց Արբա-Չայը՝ Անիի գետը, Սիլաւը, Քարբի-Չայը կամ Ապարան-Սուն՝ որ Էջմիածինը կ'ոռոգէ, Չէնկի-Չայը՝ Երևանի և Սեան լճին ջրընթացը, և Այրաբատի, Ալակէօզի, ինչպէս նաև հայկական կովկասի բոլոր մեծ գագաթներուն ձիւները՝ ծնունդ կու տան հազարաւոր աղբիւրներու և գետակներու՝ որոնք կը պահպանեն հովիտներու և ձորերու մէջի զովութիւնը՝ ամառնային մեծ սոթերու ժամանակ, կ'ապահովեն պտղաստաններու և դաշտերու ոռոգումը, և Արաքսի կը միանան միայն այն առնել՝ երբ գարնանային մեծ անձրևները կը յորդեն:

Ժամանակաւ Հայաստանի հիւսիսակողմեան բոլոր լեռներն անտառներով ծածկուած էին, Երասխի թէ՛ հիւսիսակողմը և թէ՛ հարաւային կողմերը. բայց այսօր՝ այս շրջակայքերուն մէջ ուրիշ բան չի տեսնուիր եթէ ոչ սկզբն աջաոններ՝ աներուած ամէն տարի հովիւներէն, որոնք՝ հազիւ թէ գարունը գալ կը կտրեն նորըն՝ ձիւղ հիւղերը, անոնցմով իրենց հօտերը սնուցանելու համար: Գալով ձորերուն, ամէնքն ալ ծայրահեղ արգասաւորութիւն մ'ունին՝ շնորհիւ ջուրերու առատութեան և արևուն ջերմութեան՝ այս լայնութեան աստիճանին տակ՝: Երբ ձորներու մէջ՝ բուսականութիւնը յաճախ աւելի յառաջացած է բաղդատմամբ Երևանի անմիջական շրջակայքերու եղածին, որովհետեւ՝ աւելի քիչ պաշտպանուած ըլլալով հիւսիսային քամիներուն դէմ, այս ընդարձակ դաշտագետինը շատ խիստ ձմեռներու կ'ենթարկուի: Սակայն որթատունկը և պտղատու ծառերը հոն առատօրէն կ'աճին, և Միսիսի այգեստաններուն մէջ դեռ կը

քաղեն այն ամենընտիր գինիներէն, որոնցմով կ'ըսուի թէ Նոյ նահապետը զեղծած ըլլայ:

ՔԱՐԱ-ՊԱՂ ԵՒ ՔԱՐԱ-ՏԱՂ

Երևանի հովտէն դուրս ելլելով՝ Երասխի ընթացքը կը շեղի դէպի հարաւ աւելել և կը կտրէ լեռնոտ զանգուածին հարաւային եզրերը՝ որուն կեդրոնական մասը Սեան լիճը կը զբաւէ: Գետն այն առնել կ'անցնի սաստիկ նեղ կիրճերու մէջ, իր ձախակողմը թողլով Քարա-Պաղը, կամ սև պարեզը, (Երեմի) ոռոսական երկրի մաս, և իր աջակողմը Քարա-Տաղը (սև լեռ) որ Պարսկաստանի կը վերաբերի: Այս երկրին մէջ է որ՝ մեր թուականէն առաջ՝ կը բարձրանար Նաբսուանա քաղաքը:

Ջուլդայի կողմը՝ որ կայարան մ'է սահմանագլխի երկաթուղւոյն և որ քանի մը տարիներէ ի վեր հաղորդակցութեան մէջ կը դնէ Տփլիսը Գալըէթի հետ, ձորը դեռ քանի մը հազար քայլ լայնութիւն կը ներկայացնէ. բայց վարի կողմը, կամայ կամայ կը նեղուի, վերածուելու համար խկոյն միայն անկողնի մը այն գետին՝ որ շատ անգամ կը հոսի խարակներէ եզերուած, և յաճախ խղզուած է բարձրաբերձ լեռներէ: Հոս հոն խորտաբորտ զառի վայրերէ թափուող ջրովէմներ՝ զլիւսուր ձորին մէջ կը ձևացնեն սրկային փոքրիկ տեղւոյններ, ուր հովէն լաւ պաշտպանուած՝ բուսականութեանց ամենաշուայլը կը զարգանայ: Յորենը այս կիրճերուն մէջ զարմանալի կորովով մը կ'աճի, որթատունկը իր բարունակներով ամենէն բարձր ծառերը կը կապէ, հաստաբուն ընկուզենիներու զագաթը կը հասնի և հսկայ դրասանգներու ձևով կը տարածուի անթափանցելի և դարւոր մացառախիտներու վրայ: Գիւղերը կ'աներևութեան կանաչութեան մէջ՝ թաղուած ըլլալով պտղաբեր ծառերու ճշմարիտ անտառներու մէջ. անհամեմատ պտղաստաններ ուր կը վրիտան զեղծենիներ, սալորենիներ, ծիրա-

1. Լայն 40 (Թարանթոյ, Սարուէիա, Վալնցիա, Լիզպոնս):

նենիններ, թզենիններ, նոնենիններ, խնծո-
րենիններ ու տանծիններ, ուր բնակիչները
յորդառատ քաղոյթներ կ'ընեն, կը չորցը-
նեն պտուղները արեւուն ջերմութեան տակ,
արտածելու համար՝ թէն շատ դժուարու-
թիւններով՝ դէպի Ատրպատականի և Ան-
դրկովկասի քաղաքները:

Կարևորութիւն մ'ունեցող ամէն մէկ
հովիտ՝ ունի իր գիւղաքաղաքը կամ իր գիւ-
ղակը. բայց տուններ ժայռին փակած են.
վասն զի հարկաւոր է ազահ ըլլալ մշա-
կելի երկրին, զոր բնակիչները կը գործեն
մանրակրկիտ խնամքով մը, պատշգամաձև
կը շաւեն և վեր կը բռնեն քարէ առանց
շաղախի շինուած պատերով: Մեծ բարձ-
րութիւններէ ետ դարձուած ջրվէժները՝
փոքրիկ ջրանցքներու բազմութեամբ մը՝
կը բերեն իրենց շուրերը մինչև հողին
ամենափոքր կտորը, տարածելով զովու-
թիւն և արգասաբերութիւն:

Այս ուվախները ստէպ իրարմէ շատ
հեռու են, և իրենց բնակիչները այն ժա-
մանակ միայն կը հաղորդակցին իրարու
հետ՝ երբ ջրվէժներն ուզեն իրենց թոյլ
տալ: Այն մարդիկը՝ մեր օրերուն ինչպէս
նաև հին ժամանակ՝ իրենց իրենցմէ կը
շինեն իրենց գիւղերուն մէջ՝ կեանքի հար-
կաւոր ամէն ինչ, բուրդի և բամբակի բա-
նուածքները, մշակութեան գործիքները,
իրենց ձիերուն համար համեսներ, կաւէ
ամաններ, արոյրէ սպասանթներ, ճնութե-
նէն կը ստանան արմտիքը, բանջարեղէն-
ները, պտուղները, բամբակը, իրենց լեռ-
ներուն մէջ արածող հօտերը կը հայթ-
հայթեն բուրդը, միսը, կաթնեղէնները և
մորթը: Երէն բազմաշատ է, և առատու-
թեան մէջ ապրելով՝ կ'արհամարհեն ձու-
կը որ կը վիտայ Երասխին մէջ. զանա-
զան տեսակ ձկներ և թառափներ, որոնք
երբեմն հսկայ մեծութեանց կը հասնին:
Փաշով իրենց ներածութեանց՝ անոնք
միայն հրազէններ, փամփուշտ, վառօդ և
աղ կը բերեն: Այս մարդիկ աղքատ են,
պիտի ըսուի, որովհետև շատ քիչ ստակ
ունին, բայց իրօք հարուստ են, նոյն իսկ
շատ հարուստ, որովհետև վախ չունին

ոչ անօթութենէն և ոչ ցուրտէն, և իրենց
պէտքերը աւելի առատօրէն լցուած են
քան մեր քաղաքներու բնակչաց պէտքերը:

Քարա-Պաղի ինչպէս նաև Քարա-Տա-
ղի մէջ՝ երկրին ամենաբարձր կողմերը
շատ անգամ սաստիկ մերկացած են. հա-
զիւ կարելի է տեսնել քանի մը ճոզած
պտղատու ծառեր գիւղերուն շուրջ, և փայ-
տի պակասութիւնը կը ստիպէ բնակիչները
չոր քակոր վառելու: Սակայն՝ ծայրայեղ
կլիմայով այս երկիրները, յաճախ մշու-
ներէ ծածկուած և ամպերու մէջ ծրարուած,
ուր անձրևներն յորդառատ են, ցօղերն
ամենօրեայ, կը հայթհայթեն առատ քա-
ղոյթներ արմտիքի՝ որուն մշակութիւնը՝
հօտերու պահպանումին հետ՝ լեռնական-
ներուն միակ զբաղանքը կը կազմէ: Տխուր
է այս բարձր դաշտագետիններու տեսքը
որոնք միևնոյն լայնութեան աստիճանին
բոլորն ալ նման են իրարու: Հոն ամա-
ռուան բուն տաք եղանակին կը տիրէ
սառնալից ցուրտ մը գիշեր ժամանակ,
ներքնաթափանց խոնաւութիւն մը. մեր-
կացած բլուրներն իրարու կը յաջորդեն
աչքէ կորսուելու չափ, և գիւղերու շուրջ
հանդիպած հազուագիւտ ծառերը՝ հովէն
միշտ ծածկ՝ այն տպաւորութիւնը կ'ընեն
ինչ որ մարդս կը զգայ Պըրդանիի կող-
մերն ուվէանեան եզերքներուն վրայ ցան-
ցառ կերպով բուսած անտառներուն առջև,
որոնք փոթորիկներու կատաղութիւննե-
րուն ենթարկուած են, և կամ երբ մէկը
Ռուսիոյ հարաւային անմշակ դաշտերէն
կ'անցնի:

Ասկից դուրս՝ թէ՛ պարսկական և թէ՛
ռուս հողին վրայ, բարձրութիւններն ան-
տառներով ծածկուած են. արևելեան Քա-
րա-Տաղին մէջ, ի մասնաւորի ուր հայ
զաղթականութիւններ կը բնակին. բայց
այս երկիրներուն մէջ ալ՝ մշակութիւնները՝
ծորերուն մէջ կեդրոնացած՝ ցուրտ երկիր-
ներու մշակութեանց կը նմանին: Այգին
այս բարձրութիւններուն վրայ գէշ կ'աճի,
և ձմեռնային մեծ սառնամանեաց չեն-
թարկուելու համար՝ պէտք է զայն գետնի
տակ թաղել տարուան չորս կամ հինգ

ամիսներուն մէջ՝ ինչպէս կ'ընեն իրանու զաջտագետներն ամէն կողմը: Ենորհիւ անտառներու ներկայութեան՝ որ խոնաւութիւնը կը պահպանեն, աղբիւրներն առատ են, Մեանի լճին արեւելեան կողմը գտնուող փոքր գաւառակ մը՝ Փրըք-պուլագ «քառասուն աղբիւրներ» անունը կը կրէ, բազմաթիւ առուակներու պատճառով՝ որ իր լեռներէն ծագելով՝ կէօք-Չային կը տանին իրենց յստակ ջուրերը. և այս կոչումը կ'արդարանայ Քարա-Տաղի շատ մը գիւղակներէն, կարօի և Ծորոթի նա. հանգիներէն և Հայաստանի ուրիշ բազմաթիւ գաւառներէն:

Բայց Քարա-Պաղը, անտառախիտ լեռներու, խորտուրորտ գագաթներու, մերկաբաց՝ բայց միայն հովիտներուն մէջ արգասաբեր դաշտագետներու քաօք, շատ սահմանափակ հարստութեան երկիր մ'է և որուն մէջ բնակչութիւնը չի կրնար աճիլ՝ մշակելի հողերու սակաւութեան իրեն վրայ դրած սահմաններէն աւելի: Սակայն քանի մը հեղինակներ՝ մեծ վստահութեամբ աշխատելով իրենց ատլասներուն վրայ, այս հողազանգուածին մէջ ուզած են տեսնել բոլոր արիական ցեղին ծագման երկիրը: Այս ենթադրութիւնը չկրնար պաշտպանուիլ, ոչ միայն անոր համար որ Քարա-Պաղին կը պակսի տեղը՝ այսպիսի կարեորութիւն ունեցող մարդկային ընտանիքի մը զարգացման համար, այլ և որովհետեւ լեզուագիտութեան, պատմութեան և հնախօսութեան տուած բոլոր ապացոյցներն անոր հակառակ են:

Շարունակելի

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Փ

ՀԱՅՈՒՆԻ. Հ. Վ. Հայ ծէսը 1919 տարւոյ ազգային Սիւնդոգոսի գործոց մէջ - 1919 զին. ֆր. 2.

ՍԱՐԳԻՍԵԱՆ Հ. Բ. Վսն կառաց աստուածութեան (100 օր) 1919 զին. ֆր. 50. 4.

ՄԵՂՈՒ ՇԻՐԱԿԱՅ. - Հայկական Մենամարտը (50 օր) 1919 - զին. ֆր. 50. 4.

ՈՐԲՈՒՆԻ

Յաւի մորմոքիչ տեսարանները օրէ օր կը կրկնուին և կը վերանորոգուին տխուր իրականութիւնով մեր տարաբաղ չայքներէն հետ հաղորդակցութեանց հաստատուելովն... Թշուառութեան ուրուականը կը սաւառնի խոժոռաղէմ, ու մահուան և օրհասի սպառնալիքը՝ Դամոկլէսի սուրին պէս կախուած է հայութեան ջրաւոր դասակարգին գլխուն վրայ...:

Արինայեղ և օրհասաբեր փոթորիկն անցաւ մեր վրայէն, իր ուժգին թափին մէջ տանելով ազգի մը կորովն և խանդաղատ ճաղիկը. բայց անոր հետեանքներն ահաբեկիչ և երբեմն վհատեցնելու աստիճան ծանրակշիւ են. Հայ մարտիրոսութեան գողգոթայի ճամբուն վրայ կուտակուեցան մեր սիրելիներուն նշխարները, անոնց արիւնով ներկուեցաւ մեր երկիրը. իրենց գացին իրենց զաղափարականին վայելքներուն արժանանալու, բայց թողուցին մեզ՝ մազապուրծ գերծուածներու սրբազան և փափկազին աւանդ մը՝ իրենց որրկները...:

Ո՛ր սիրտը չի փղձկար, չի գալարի՝ մտածելով սոսկ այն հարիւր հազարեակներուն, - ապագայ յուսալից կոկոններ - , որոնք իրենց սրտահատոր ծնողներէն յափըշտակուած, կ'ապրին դեռ, բայց որոնց համար կեանքը երազ մը կը թուի, ցնորք մ'է՝ որուն չեն կրնար հաւատալ, անըջանք մը, որուն առջև իրենց կրած տառապանքները կ'ովկիանանան, կ'անսահմանուին... կ'ապրին դեռ՝ որովհետեւ երկնային բազուկի մը զիրենց փրկած է, կամ վսն զի իրենց կաշիին և ոսկրներուն մէջ դեռ սիրտ մը կայ որ կը տրոփէ և հոգի մը՝ որ կը զօրացնէ... Դեռ կը վայելեն արեւու լոյսը՝ որովհետեւ այս ինչ մահաւտականը կամ այն ինչ քիւրտը նշմարած է անոնց սեւաթորմի աչքերուն մէջ իր ապագայի կրօնափոխ որդեգիրը, կամ միւս չընադագեղ կոյսին վարդապարմիւր այտերուն և նազներին